**Արձանագրություն N 2**

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար տրանսպորտային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՏՆ-26/1** ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5 — 21 մայիսի 2026թ. ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մկրտչյան, Ա. Թումանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան

***1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ***

| *Չափաբաժնի համարը* | *Չափաբաժնի անվանումը* | *Ապրանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)* |
|---|---|---|
| 1 | Ավտոմեքենաների անիվներ | 900000 |
| 2 | Ավտոմեքենաների անիվներ | 588000 |
| 3 | Ավտոմեքենաների անիվներ | 816000 |
| 4 | Ավտոմեքենաների անիվներ | 112000 |
| 5 | Ավտոմեքենաների անիվներ | 72000 |
| 6 | Ավտոմեքենաների անիվներ | 220000 |
| 7 | Ավտոմեքենաների անիվներ | 140000 |
| 8 | Ավտոմեքենաների անիվներ | 1320000 |
| 9 | Ավտոմեքենաների անիվներ | 3000000 |
| 10 | Ավտոմեքենաների անիվներ | 144000 |
| 11 | Ավտոմեքենաների անիվներ | 112000 |
| 12 | Ավտոմեքենաների անիվներ | 1520000 |
| 13 | Շարժիչի յուղեր | 184000 |

***2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ***

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 19.05.2026թ.-ին ժամը 11:30-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 20.05.2026թ.-ին ժամը 11:30-ին:

***3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.***

| **Հ/հ** | **Մասնակիցների անվանումները** | **Հասցեներ** |
|---|---|---|
| 1 | «Ամուրա» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 01091505, ք. Երևան, Ավան, 2րդ մկրշ., Շ.2/10, բն. 43, amura.tender@mail.ru, հեռ. 033 84 48 86 |
| 2 | «ՄՄՍ ԱՎՏՕ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 01087198, ք.Երևան, Քանաքեռ Զեյթուն Լեփսիուսի փ.Շ.35,բն.7, mms.avto.llc@gmail.com, հեռ. 033 02 63 59 |
| 3 | «ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ» Ա/Ձ | ՀՎՀՀ՝ 47874685, ԱՐԱՐԱՏ, ՎԵԴԻ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ., Տ 50, Karaxanyan90@mail.ru, հեռ. 041 46 44 44 |
| 4 | ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 01096027, ք. Երևան, Դավիթ բեկի 180/26, h5r.gasparyan@yandex.com, հեռ. 077 69 95 51 |

***4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ***

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՏՆ-26/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

***5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին***

eauction.armeps.am համակարգի միջոցով հարցումներ չեն եղել:

## 6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

| Չափաբաժնի համար | Գնման առարկայի անվանումը | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | Ավտոմեքենաների անիվներ | Ամուրա ՍՊԸ | 900000 | 900000000 | 20 % | 1080000000 | 702000 | 20 % | 842400.00 | |
| | | ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ | | 777777777 | 0 % | 777777777 | 900000 | 0 % | 900000.00 | |
| | | ՅԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ | | 9850950 | 20 % | 11821140 | 9850950 | 20 % | 11821140.00 | Մերժված |
| 2 | Ավտոմեքենաների անիվներ | Ամուրա ՍՊԸ | 588000 | 900000000 | 20 % | 1080000000 | 489000 | 20 % | 586800.00 | |
| | | ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ | | 777777777 | 0 % | 777777777 | 588000 | 0 % | 588000.00 | |
| | | ՅԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ | | 9850950 | 20 % | 11821140 | 9850950 | 20 % | 11821140.00 | Մերժված |
| 3 | Ավտոմեքենաների անիվներ | Ամուրա ՍՊԸ | 816000 | 900000000 | 20 % | 1080000000 | 679000 | 20 % | 814800.00 | |
| | | ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ | | 777777777 | 0 % | 777777777 | 777777777 | 0 % | 777777777.00 | Մերժված |
| 4 | Ավտոմեքենաների անիվներ | Ամուրա ՍՊԸ | 112000 | 900000000 | 20 % | 1080000000 | 92800 | 20 % | 111360.00 | |
| | | ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ | | 777777777 | 0 % | 777777777 | 777777777 | 0 % | 777777777.00 | Մերժված |
| 5 | Ավտոմեքենաների անիվներ | Ամուրա ՍՊԸ | 72000 | 900000000 | 20 % | 1080000000 | 59800 | 20 % | 71760.00 | |
| | | ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ | | 777777777 | 0 % | 777777777 | 777777777 | 0 % | 777777777.00 | Մերժված |
| 6 | Ավտոմեքենաների անիվներ | Ամուրա ՍՊԸ | 220000 | 900000000 | 20 % | 1080000000 | 179000 | 20 % | 214800.00 | |
| | | ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ | | 777777777 | 0 % | 777777777 | 777777777 | 0 % | 777777777.00 | Մերժված |
| 7 | Ավտոմեքենաների անիվներ | Ամուրա ՍՊԸ | 140000 | 900000000 | 20 % | 1080000000 | 116000 | 20 % | 139200.00 | |
| | | ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ | | 777777777 | 0 % | 777777777 | 777777777 | 0 % | 777777777.00 | Մերժված |
| 8 | Ավտոմեքենաների անիվներ | Ամուրա ՍՊԸ | 1320000 | 900000000 | 20 % | 1080000000 | 1098000 | 20 % | 1317600.00 | |
| | | ՅԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ | | 9850950 | 20 % | 11821140 | 9850950 | 20 % | 11821140.00 | Մերժված |
| | | ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ | | 777777777 | 0 % | 777777777 | 777777777 | 0 % | 777777777.00 | Մերժված |
| 9 | Ավտոմեքենաների անիվներ | Ամուրա ՍՊԸ | 3000000 | 900000000 | 20 % | 1080000000 | 2498000 | 20 % | 2997600.00 | |
| | | ՅԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ | | 9850950 | 20 % | 11821140 | 9850950 | 20 % | 11821140.00 | Մերժված |
| | | ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ | | 777777777 | 0 % | 777777777 | 777777777 | 0 % | 777777777.00 | Մերժված |
| 10 | Ավտոմեքենաների անիվներ | Ամուրա ՍՊԸ | 144000 | 900000000 | 20 % | 1080000000 | 119000 | 20 % | 142800.00 | |
| | | ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ | | 777777777 | 0 % | 777777777 | 777777777 | 0 % | 777777777.00 | Մերժված |
| 11 | Ավտոմեքենաների անիվներ | Ամուրա ՍՊԸ | 112000 | 900000000 | 20 % | 1080000000 | 93000 | 20 % | 111600.00 | |
| | | ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ | | 777777777 | 0 % | 777777777 | 777777777 | 0 % | 777777777.00 | Մերժված |
| 12 | Ավտոմեքենաների անիվներ | Ամուրա ՍՊԸ | 1520000 | 900000000 | 20 % | 1080000000 | 1264000 | 20 % | 1516800.00 | |
| | | ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ | | 777777777 | 0 % | 777777777 | 1520000 | 0 % | 1520000.00 | |
| | | ՅԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ | | 9850950 | 20 % | 11821140 | 9850950 | 20 % | 11821140.00 | Մերժված |

| Չափաբաժնի համար | Գնման առարկայի անվանումը | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 13 | Շարժիչի յուղեր | «ՄՄ ԱՎՏՕ» ՍՊԸ | 184000 | 153300 | 20 % | 183960 | 146000 | 20 % | 175200.00 | |
| | | Ամուրա ՍՊԸ | | 900000000 | 20 % | 1080000000 | 148400 | 20 % | 178080.00 | |
| | | ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ | | 777777777 | 0 % | 777777777 | 777777777 | 0 % | 777777777.00 | Մերժված |

Աճուրդն ամփոփվել է **20.05.2026.-ին** և Համակարգի կողմից

- 1-12-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «**Ամուրա**» **ՍՊԸ-ն**,
- 13-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «**ՄՄ ԱՎՏՕ**» **ՍՊԸ-ն**:

***7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին***

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ

1. Համակարգի կողմից 1-12-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «**Ամուրա**» **ՍՊԸ**-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

- Ներկայացված հավելված 1-ում (Դիմում-հայտարարություն) լրացված չէ իրական շահառուի անուն ազգանունը և անձնագրի տվյալները, ինչպես նաև ռուսերեն լեզվով գրված չէ արտադրողի կազմակերպաիրավական ձևը:
- 1-12-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի մեջ «Ֆիրմային անվանում» սյունակում անհրաժեշտ է գրել առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, «Ապրանքային նշան» սյունակում անհրաժեշտ է գրել առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, «Մակնիշը» սյունակում անհրաժեշտ է գրել առաջարկվող ապրանքի մակնիշը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՏՆ-26/1** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 21.05.2026թ.-ին նիստը կասեցնել՝ ծանուցել «**Ամուրա**» **ՍՊԸ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Համակարգի կողմից 13-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «**ՄՄ ԱՎՏՕ**» **ՍՊԸ**-ի հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակի՝ ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՏՆ-26/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի մասնակից «ՄՄ ԱՎՏՕ» ՍՊԸ-ին փոխկապակցված անձը /«ՊԱՐՏԱԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ» ՍՊԸ-ն՝ 24.03.2026-24.03.2028թթ. ժամանակահատվածով/ գտնվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: «ՄՄ ԱՎՏՕ» ՍՊԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՏՆ-26/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 կետի համաձայն Հավելված 1 /Դիմում-հայտարարությամբ/ հայտարարել և հավաստել է, որ իր հետ փոխկապակցված անձինք բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և 19-րդ ենթակետի պահանջների համաձայն «ՄՄ ԱՎՏՕ» ՍՊԸ-ի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող և այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:*

***8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին***

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 01.06.2026թ. ժամը 16:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**9. 01.06.2026թ. *ժամը* 16:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ**

Նիստը վերսկսվեց 01.06.2026թ. ժամը 16:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ «**Ամուրա**» **ՍՊԸ**-ն սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

- «**Ամուրա**» **ՍՊԸ**-ի հայտը 1-12-րդ չափաբաժինների մասով գնահատել բավարար,
- Մերժել 13-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «**ՄՄ ԱՎՏՕ**» **ՍՊԸ**-ի հայտը:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝0:*

**10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ**

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝

- ✓ 1-12-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «**Ամուրա» ՍՊԸ**-ին հայտարարել որպես ընտրված մասնակից,

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

10.5 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ընթացակարգը 13-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

10.6 Հաստատել 13-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

նախագահ՝ __________ Վաչիկ Խաչատրյան

անդամներ՝ __________ Վահագն Մկրտչյան

__________ Աննա Թումանյան

__________ Սիլվա Գարանյան

քարտուղար՝ __________ Նաիրա Բաբայան